ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

6 մայիսի 2011թ. **N_-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՄԻ ՇԱՐՔ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով և 67-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի N193-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել Երևան համայնքի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերություններ (այսուհետ՝ Ընկերություններ)՝ համաձայն հավելվածի։

2. Երևանի Արաբկիր, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ղեկավարներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողովներ։

3. Լուծարման հանձնաժողովներին՝ 3-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտել Ընկերությունների լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի տնօրինությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
«------» ---------- 2011թ.
N --------- - Ա որոշման

ՑԱՆԿ

ԼՈՒԾԱՐՎՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

h/h	Ընկերության անվանումը
	ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ
1	«Արաբկիր համայնքի «Արաբկիր արտադրա-առևտրային» ՓԲԸ
2	«Արաբկիր համայնքի թիվ 3 մշակույթի տուն» ՓԲԸ
3	«Արաբկիր համայնքի «Արաբկիր-ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ
4	«Արաբկիր համայնքի «Արաբկիր ճանապարհների շահագործման» ՓԲԸ
5	«Արաբկիր-Բարեկարգում» ՓԲԸ
	ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ
6	«Էրեբունու համայնքի «Էրեբունու շենքերի և շինությունների վերանորոգում» ՓԲԸ
7	«Երևանի Էրեբունու համայնքի «Շենքերի և շինությունների շահագործման» ՓԲԸ
	ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ
8	«Ուսուցում» ՓԲԸ
	ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ
9	«Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքի «Ուռենի» ՓԲԸ
	ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ
10	«Նոր Նորք համայնքի բնակֆոնդի նորոգում» ՓԲԸ
	ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ
11	«Երևանի Նորք-Մարաշ թաղային համայնքի «Մարաշ-1» ՓԲԸ
	ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ
12	«Շենգավիթի թաղապետարանի «Շենգավիթ-սերվիս» ՓԲԸ
	ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ
13	«Քանաքեռ-Զեյթուն համայնքի առևտրի և սպասարկման» ՓԲԸ
14	«Քանաքեռ-Զեյթուն համայնքի «Մեծ Զեյթուն» արտադրա-շինարարական և շինվերանորոգման» ՓԲԸ
15	«Քանաքեռ-Զեյթուն համայնքի շենքերի և շինությունների շահագործում» ՓԲԸ

ՏԵՂԵԿԱՆՔ -ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԻ ՇԱՐՔ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Մի շարք բաժնետիրական կազմակերպություններ լուծարելու մասին» որոշման ընդունումը պայմանավորված է Երևանի նախկին թաղային համայնքների կողմից հիմնադրված և տարիներ շարունակ գործունեություն չիրականացնող և կրեդիտորական մեծ պարտավորություններ կուտակած փակ բաժնետիրական ընկերությունների հետագա ֆինանսատնտեսական գործունեությունը վերսկսելու ոչ նպատակահարմարությամբ:

Վերոհիշյալ նախագծի ընդունման համար հիմք են հանդիսացել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների կողմից Երևանի քաղաքապետարան ներկայացրած իրենց ենթակայությանը հանձնած մի շարք փակ բաժնետիրական ընկերությունները լուծարելու մասին առաջարկությունները, ինչպես նաև գործունեություն իրականացնող «Արաբկիր համայնքի «Արաբկիր արտադրա-առևտրային» ՓԲԸ-ի մրցակցային շուկայում «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան ոչ մրցունակ լինելը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԻ ՇԱՐՔ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Մի շարք բաժնետիրական կազմակերպություններ լուծարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԻ ՇԱՐՔ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Մի շարք բաժնետիրական կազմակերպություններ լուծարելու մասին»որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ